

# ՄԻՇՏ ԿՈՒՒՆԵՐ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԸ

ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԳԻ  
ՆԻՍՏԸ  
ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Ե  
Ր  
Ե  
Ւ  
Ն

Հ Ե Ռ Ա Տ Ի Պ

Փ  
Ս  
Ր  
Ի  
Ձ

Ե Ր Ե Ւ Ա Ն  
«ԱՐՄԷՆՓՐԷՍ» -- ՅՈՒԼԻՍ 22 / 24

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ  
ԿԵՂԻՐՈՆԻ ԲԱՅՈՒՄ

ՀԱՅԻ ԳՈՐԾԱՏՈՒՆԸ  
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒԱԾ

Երևանի էրեբունի հիւանդանոցին մէջ Յուլիս 24-ին հանդիսաւոր բացումը կատարուած է Կանանց սոցիալապահպան կեդրոնին որ ստեղծուած է Հարվըրտի բժշկական համալսարանի գիտնականներուն հանդանակութեամբ: Բացումին ներկայ գտնուած են Նախագահ Լեւոն Տէր -- Պետրոսեան եւ Ասոցիալապահպան նախարար Արա Բարլոյեան:

Ախուրեանի հացի գործատունը որ վնասուած էր երկրաշարժէն, վերակառուցուած է եւ սկսած է գործել: Ան հացի օրական 21 թոն արտադրութեան կարողութիւն ունի եւ կրնայ ապահովել նաեւ Գիւմրին, ուր վերջին շրջաններուն հացի պակաս կը նկատուի:

Շարաթ օր, Յուլիս 25-ին, աղբը շահան ՍՈՒ - 25 ոմրաձիգ օդանաւ մը ուժերը նետած է Մարտունիի վրայ, որու հետեանքով չորս հոգի մեռած է եւ վիրաւորներ ալ կան: Գնդակոծման ենթարկուած են նաեւ նոյն շրջանի ճարտար, Խնուշինակ, Նորչէն եւ Հացի գիւղերը, ուր եւս վնասներ կան: Նոյն կացութեան ենթակայ են Արարատի շրջանի Երասխ, Կապանի Սեւաքար, Մեղրիի Շանիձոր գիւղերը: Կապան մէկ մեռեալ կայ:

Մարտակերտի շրջանն ալ կոխները կը շարունակուին: Երեքշաբթի ստուռան տուեալներով (Յուլիս 28) Մազաուղ գիւղը, որ տասը օրէ ձեռքէ ձեռք կ'անցնի, վերադարձուած էր Հայերու կողմէ: Աղբիւնները շատ կը փորձեն նաեւ յառաջանալ դէպի Մարտանդի ջրամբարը, բայց ետ մղուած են, զոհեր տալով:

Յուլիս 28-ին կը շարունակուէր Գերագոյն Խորհուրդի արտակարգ նիստը, որ կը քննարկէ սեփականաշնորհման օրինակները...

Հանրապետութեան նախագահի հրամանագրով (Յուլիս 27) արտակարգ եւ լիազօր ղեկավարի հանդամանք տրուած է Մոսկուայի Հայաստանի մնացուն ներկայացուցիչ՝ Ֆելիքս Մամիկոնեանի, նաեւ Մեծն -- Բրիտանիա եւ հիւսիսային Իրլանտայի Հայաստանի ժամանակաւոր ներկայացուցիչ՝ Արմէն Սարգսեանի, ՄԱԿ-ի մօտ մշտական ներկայացուցիչ Միայեալ -- Նահանգներու ժամանակաւոր ներկայացուցիչ՝ Ալեքսանդր Արզումանեանի եւ Արտաքին Գործոց Նախարարի տեղակալներ՝ Գէորգ Ղազինեանի, Արման Նաւասարդեանի եւ Արման Կիրակոսեանի:

Աւերի քան ամիս մը Գորիսի ստեղծագործական կեդրոնը մնալէ ետք արցախցի որբ եւ վատառողջ 41 երախաներ վերադարձած են, Մանուկները հոս բերած էին Ազնաուր ընկերակցութեան անդամ Մարտէլ Թոնին եւ Գորիսի Գթութեան Բարեսիրական Ընկերութիւնը: Ամէն ջանք թափուած է որպէսզի բարեօքի երախաներու հոգեկան վիճակը:

## ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԲԱՅԿՈՆՈՒՐԷՆ առջի օր, Յուլիս 27, արձակուեցաւ Սոյուզ -- ԹՄ 15 հրթիռը, որու երեք այրանաւորներէն մէկը Ֆրանսայի է՝ Միշէլ Թոնիինի: Այս մասնակցութեան համար Ֆրանսա 79,2 միլիոն ֆրանք վճարեց:

ԼԻԲԱՆԱՆԻ վարչապետը՝ Ռաշիտ Սոհլ Փարիզ եկաւ, պաշտօնական եռօրեայ այցելութեան մը համար: Խօսակցութեան ընթացքին նոր պայմանաժամին (836 կան պարտքին նոր պայմանաժամին (836 միլիոն ֆրանք), բայց, Լիբանանի երեսփոխանական ընտրութիւններն ալ (Օգոստոս 23, 30, Սեպտեմբեր 6) պիտի չանաւորուին: Երկու գլխաւոր ընդգրկմադիրները՝ Աուն եւ Ռ. Լատէ Ֆրանսա կ'ապրին:

## ԱՐԹԻՎԷՆ՝ ԱՐՅԱՆԻՆ

Արթիկի բնակչութիւնը սկանչալոր Արցախի հողերուն, կազմակերպած է հերթական օգնութիւն՝ կառքի շարասիւնով: Այսպէս, վերջերս Արցախ գրկուած են 600 հազար ուրբի արժողութեամբ ապրանքներ՝ 50 թոն ալիւր, թարմ հաց, այլ սննդամթերքներ, ծխախոտ ու վառելանիւթ:

## ԱՆԴՐԱՆԻԿ ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ ԾՆՈՒՆԳԸ

Հայաստանի Գրողներու Միութեան Գիւմրիի մասնաճիւղի «Շիրակ» գրական գեղարուեստական, հանրային քաղաքական երկամսեայ հանդէսին առաջին թիւը լոյս տեսած է: Ասիկա Գիւմրիի գրահրատարակչական հարուստ պատմութեան առաջին ամսագիրն է:

## ԼՂՀ-Ի ՔԱՐՏԵՍԸ

Հայաստանի բաց համալսարանի հրատարակչութիւնէն լոյս տեսած է տասը հազար օրինակով՝ «Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան» վարչական գումարաբարձը, որ իր տեսակին մէջ եղակի է: Հոն տրուած են Արցախի վեց շրջաններու՝ Ասկերանի, Հաղբութի, Մարտակերտի, Մարտունիի, Շահումեանի եւ Շուշիի վարչական բաժանումները, քաղաքները, գիւղերը. հոն ցոյց տրուած են նաեւ խորհրդային տարիներուն հայկական հիւնուարհ հոգեբու վրայ ստեղծուած ազդեցական ընկալալայրերը: Քարտէսին հեղինակն է աշխարհագրական գիտութիւններու Տոքթոր -- Փրոֆ. Սերկէյ Մեղրումեան, խմբագիրը՝ պատմական գիտութեանց Տոքթոր Բաղրատ Ուլուբարեան, քարտէսագիրը՝ Խաչիկ Կարապետեան:

## ՀՈՂԱՄՇԱԿՈՒԹԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Կարգ մը նախաձեռնարկներ, գիւղատընտեսութեան, հողամշակութեան ոլորտի բանուորներուն, մտաւորականութեան եւ այլոց կոչ ըրած են հողամշակութեան եւ աշխարհագրական կուսակցութիւն հիմնելու: Նոր ձեւաւորուող կուսակցութիւնը իր ջանքերը կը կեդրոնացնէ ճշմարտեմէն դուրս գալու, գիւղատնտեսութեան բարեփոխումներու, գիւղի բանուորներու շահերն ու իրաւունքները պաշտպանելու վրայ:

## ՄԱՀ ՆԿԱՐԻՉ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱՐԴԱՐԵԱՆԻ

Բիւրականի մէջ, Յուլիս 24-ին հողին յանձնուած է Հայաստանի Ժողովրդական նկարիչ Յովհաննէս Զարդարեանի մարմինը: Այսպէս կը գտնուէր ծանօթ նկարիչին արուեստանոցը, ուր 71-ամեայ արուեստագէտը երկար տարիներ ստեղծած է բարձր ճանաչումի արժանացած իր բազմաթիւ գործերը:

## ՆՈՐԱԾԻՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԶՐԻ ՍՆՆԳԵՂԷՆ

Հայաստանի դեղարաններուն մէջ սկսած է նորածիններու համար նոր սննդաբար խառնուրդ՝ «Նորվալակ»-ի բաշխումը, ձրի: 1-էն 6 ամսու երախաներու համար նախատեսուած սննդաբար այս փոշին հոլանտական արտադրութիւն է. անկէ 106 թոն յատկացուցած է Եւրոպայի Հասարակապետութիւնը՝ Հայաստանին: Իսկ Պրիւսիան փոխարկութիւնը իր միջոցներով ապահոված է միջազգային Կարմիր Խաչը: Անկէ մաս մը կը գրկուի նաեւ Արցախ:

## ԱՌՈՒՐԵԱՆԻ ՆՈՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՂԸ

Ախուրեանի կեդրոնատեղին բացուած է 50 հոգինոց մանկապարտէզ, որ կառուցուած եւ կահաւորուած է Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի, գերմանական Աւետարանական Եկեղեցոյ եւ միջազգային «Բառիթա» բարեսիրական կազմակերպութեան միջոցներով: Մանկապարտէզը օրհնած են Մայր Աթոռի գլխաւոր տնօրէն Ներսէս Արք. Պողոսյան եւ Գերմանիոյ Աւետարանական Եկեղեցոյ պատուիրակութեան ղեկավար Հանս Օթթօ Հանս:

## ԶԱՀՐԱՏԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ ԵՐԳՈՎ

Հայաստանի հեռատեսիլի «Սփիւռք» կայանէն հանդէս եկած է երգահան -- կլիթաուհար Վահրամ Թաթիկեան, որ շուրջ մէկ ժամուան ընթացքին ծանօթացուցած է Չահրատի կեանքն ու գործն, անոր հետ ունեցած իր հանդիպումները: Թաթիկեան երգած է շարք մը երգեր, զորս յօրինած է Չահրատի կեանքն ու գործը, անոր հետ օգտագործած է քանի մը տարի առաջ երեւան լոյս տեսած Չահրատի բանաստեղծութիւններու ժողովածոն: